ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 23 » « ապրիլի » 2024թ.**

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Գ.Շահնազարյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ս.Ավագյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Դպիրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

1.1. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստը կայացել է 2024 թվականի ապրիլի 23-ին, ժամը 15:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

2. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի մասին

2.1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ՝

2.1.1. Ըստ մրցույթի Հրավերի Հավելված №6-ի Հավելված №1.1-ի 8-րդ կետի՝ ամբողջ համակարգը (անալիզատորներ, չափաբերման սարքավորումներ, տվյալների հավաքագրման և մշակման ծրագրային ապահովում) պետք է մատակարարվի նույն արտադրողից՝ նպատակ ունենալով բացառելու լրացուցիչ ծրագրային ապահովման համակարգով հարալրելու խնդիրը: Սակայն, մասնակցի կողմից առաջարկված տարանջատված մասնիկների (PM) անալիզատորը պատկանում է այլ արտադրողի, բացակայում է PM մասնիկների չափման վերաբերյալ տեղեկատվությունը և հստակեցված չէ ծրագրային ապահովման լուծումը,

2.1.2. Ներկայացված մրցույթի հայտում բացակայում են ծրագրային ապահովման, տաղավարի կառուցվածքի, սարքավորումների աշխատանքի համար նախատեսված օժանդակ սարքերի (անխափան սնուցման համալիրի, համակարգչի, օդորակչի, ձայնաազդանշանային և հրդեհային անվտանգության համալիրի), սարքավորումների երաշխիքի և տեղադրման, ուսուցման մասին տեղեկատվությունները (մրցույթի Հրավերի Հավելված №6-ի Հավելված №1.1-ի 2-8-րդ կետեր): Առաջարկի հետ ենթակա էր ներկայացման որակի և բնապահպանական հավաստագրեր, միջազգային հաստատումներ:

2.2. «ՓԻԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ՝

2.2.1. Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է առաջարկվող ապրանքների մոդելները,

2.2.2. Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ հանդիսանում է մրցույթի Հրավերի Հավելված №6-ի Հավելված №1.1-ի կրկնօրինակում: Տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ ենթակա է հստակեցման և առաջարկվող ապրանքների բնութագրերի նկարագրման:

2.3. ARMGATE SIA-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ՝

2.3.1. Ածխածնի երկօքսիդի (CO_2) անալիզատորի ստորին հայտնաբերման սահմանը չի համապատասխանում մրցույթի Հրավերի Հավելված №6-ի Հավելված №1.1-ով նախատեսված նվազագույն պահանջին՝ ≤ 20 ppb փոխարեն նշված է ≤ 200 ppb,

2.3.2. Ըստ մրցույթի Հրավերի Հավելված №6-ի Հավելված №1.1-ի 8-րդ կետի՝ ամբողջ համակարգը (անալիզատորներ, չափաբերման սարքավորումներ, տվյալների հավաքագրման և մշակման ծրագրային ապահովում) պետք է մատակարարվի նույն արտադրողից: Սակայն, մասնակցի կողմից առաջարկված տարանջատված մասնիկների (PM) անալիզատորը պատկանում է այլ արտադրողի և աշխատանքային մեթոդը տարբերվում է մրցույթի Հրավերի Հավելված №6-ի Հավելված №1.1-ով սահմանված «Beta Gauge Attenuation/ Բետա չափիչի թուլացում» մեթոդից:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Գ.Շահնազարյան)

3.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.9 կետը՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ՓԻԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, ARMGATE SIA-ի ներկայացրած հայտի անհամապատասխանությունը շտկելու նպատակով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը:

3.2. Հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով տեղեկացնել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «ՓԻԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, ARMGATE SIA-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և Պատվիրատու gnumner@env.am էլ.փոստին ներկայացնել.

3.2.1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված,

3.2.2. «ՓԻԷՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված,

3.2.3. ARMGATE SIA-ն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Գ.Շահնազարյան

4.1. «ՇՄՆ-ԲՆ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել 2024 թվականի ապրիլի 29-ին, ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, շրջակա միջավայրի նախարարության շենքում, 5-րդ հարկ, 529 սենյակ:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Գ.Շահնազարյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ս.Ավագյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Դպիրյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Սինանյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան